## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 փետրվարի 2025 թվականի N 181-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի երկրորդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման պահանջներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, ինչպես նաև չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, շինության զբաղեցրած հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի սահմանափակումների ցանկում, հիմք ընդունելով հողամասի և շինության հատակագծերը՝ տրված «Ջիվան Հարությունյան Արսենի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից, Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից 2024 թվականի հոկտեմբերի 17-ին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2024W9NGTA), շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ դրական եզրակացությունը տրված «ՍԵՅՍՄՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2024 թվականի նոյեմբերի 12-ին, շինությունը կատարած անձ Տիգրան Հայկազի Վանեսյանի 2024 թվականի դեկտեմբերի 20-ի N 6953 դիմումը. ***որոշում եմ՝***

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թաիրով գյուղում գտնվող, 36.0 քառակուսի մետր մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա գտնվող 36.0 քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակը, ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի սեփականությունը և օրինականացնել՝ համաձայն «Ջիվան Հարությունյան

Արսենի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերի:

2. Հողատարածքին և առկա շինությանը տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Թաիրով, Վ. Մամիկոնյան փողոց, 1-ին նրբանցք, 38 ավտոտնակ (ծածկագիր 04022MEGVVVS):

3. Հաշվի առնելով, որ կառույցն իրականացվել է Տիգրան Հայկազի Վանեսյանի կողմից և ընդունվել է առաջարկը՝ գնման նախապատվության իրավունքով ձեռք բերելու հողամասը և շինությունները, Տիգրան Հայկազի Վանեսյանին ուղղակի վաճառքով օտարել Հայաստանի Հանրապետյան Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թաիրով գյուղի Վ. Մամիկոնյան փողոցի 1-ին նրբանցքի թիվ 38 հասցեում գտնվող 0,0036 հեկտար մակերեսով հողամասը՝ առկա շինություններով:

4. 36.0 քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոխել որպես բնակելի կառուցապատման հող: Համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

5. Ինքնակամ կառույցի օրինականացման և վաճառքի համար վճարը սահմանվում է յուրաքանչյուր մեկ քառակուսի մետր ավտոտնակի համար 2725 Հայաստանի Հանրապետության դրամ: Վճարման ենթակա գումարը կազմում է 98 100 (իննսունութ հազար հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, որը ենթակա է վճարման Փարաքար համայնքի վարչական եկամուտների 900325191154 հաշվեհամարին:

6. Մեկ քառակուսի մետր հողամասի օտարման վճարը սահմանվում է 10513,8 Հայաստանի Հանրապետության դրամ, որը 36.0 քառակուսի մետրի համար կկազմի 378 496,80 (երեք հարյուր յոթանասունութ հազար չորս հարյուր իննսունվեց Հայաստանի Հանրապետության դրամ ութսուն լումա) Հայաստանի Հանրապետության դրամ, որը ենթակա է վճարման Փարաքար համայնքի ֆոնդային եկամուտների 900325191139 հաշվեհամարին:

7. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Լ. ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ**

2025 թ. փետրվարի 28
գ. Փարաքար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 փետրվարի 2025 թվականի N 182-Ա

## ԺՈՐԱ ԱԼԲԵՐՏԻ ԲՈՅԱԽՉՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի ա) ենթակետով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «ՍԵՅՍՄՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2024 թվականի հոկտեմբերի 25-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի կողմից 2024 թվականի հոկտեմբերի 24-ին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2024YF7ZXB), հողամասի սեփականատեր Ժորա Ալբերտի Բոյախչյանի 2024 թվականի նոյեմբերի 14-ի N 6524 դիմումը. ***որոշում եմ՝***

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Բաղրամյան գյուղի Վ. Տերյան փողոցի 3-րդ փակուղի 6 հասցեում գտնվող՝ Ժորա Ալբերտի Բոյախչյանին սեփականության իրավունքով պատկանող՝ 04-030-0042-0009 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված՝ 129.4 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը՝ համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «Ավագ Ավագյան Գագիկի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից տրված հողամասի և շինության հատակագծի, իսկ հողամասում առկա 53.9 քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակը, 34.0 քառակուսի մետր արտաքին մակերեսով անասնաշենքը և 1.6 քառակուսի մետր մակերեսով պարիսպը թողնել ինքնակամ:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր բնակելի տան համար կազմում է 1422 Հայաստանի Հանրապետության դրամ: Վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 184 006,80 (մեկ հարյուր ութսունչորս հազար վեց Հայաստանի Հանրապետության դրամ ութսուն լումա) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի Բաղրամյան գյուղի 900325003524 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝** **Լ. ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ**

2025 թ. փետրվարի 28
գ. Փարաքար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 փետրվարի 2025 թվականի N 183-Ա

## ՄԱՐԻՆԵ ՌՈՒԲԻԿԻ ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ԵՎ ՄՅՈՒՍՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի ա) և բ) ենթակետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «ՍԵՅՍՄՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2024 թվականի սեպտեմբերի 12-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի կողմից 2024 թվականի սեպտեմբերի 13-ին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2024NL7DNB), հողամասի համասեփականատեր Մարինե Ռուբիկի Թովմասյանի և մյուսների 2024 թվականի հոկտեմբերի 8-ի N 5727 դիմումը. ***որոշում եմ՝***

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղում գտնվող՝ Մարինե Ռուբիկի Թովմասյանին, Արմինե Ռուբիկի Թովմասյանին, Գայանե Ռուբիկի Թովմասյանին, Սիլվարդ Ռուբիկի Թովմասյանին, Սուսաննա Ռուբիկի Թովմասյանին, Ռուբիկ Մուխաելի Թովմասյանին և Ալվարդ Գրիգորի Թովմասյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող՝ 04-094-0054-0004 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված՝ 10.4 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը, 17.8 քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակը և 11.8 քառակուսի մետր արտաքին մակերեսով ծածկը, թվով 2

ինքնակամ բացված պատուհանները և թվով 1 ինքնակամ բացված դուռը՝ համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «Ավագ Ավագյան Գագիկի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերի:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր բնակելի տան, ավտոտնակի և ծածկի համար կազմում է 2316 Հայաստանի Հանրապետության դրամ, յուրաքանչյուր մեկ ինքնակամ բացված պատուհանի և դռան համար՝ 2316 Հայաստանի Հանրապետության դրամ: Վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 99 588 (իննսունինը հազար հինգ հարյուր ութսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Հողատարածքին և շինությանը տրամադրել հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Փարաքար, Ռ. Արշակյան փողոց, թիվ 28/1 բնակելի տուն (ծածկագիր 04012Q2RWJHC):

4. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի Փարաքար գյուղի 900325191154 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

5. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝** **Լ. ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ**

2025 թ. փետրվարի 28
գ. Փարաքար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 մարտի 2025 թվականի N 184-Ա

## ԱՆԴՐԵՅ ԿՈՆՍՏԱՆՏԻՆՈՎԻՉ ԿԱԶԵԵՎԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի ա) և բ) ենթակետերով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «ՍԵՅՍՄՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2024 թվականի հոկտեմբերի 10-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի կողմից 2024 թվականի սեպտեմբերի 27-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2024NSLB2S), հողամասի սեփականատեր Անդրեյ Կոնստանտինովիչ Կազեեվի 2024 թվականի հոկտեմբերի 15-ի N 5881 դիմումը. ***որոշում եմ՝***

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թահիրով գյուղի Ե. Քոչարի փողոց 1-ին նրբանցք թիվ 7 հասցեում գտնվող՝ Անդրեյ Կոնստանտինովիչ Կազեեվին սեփականության իրավունքով պատկանող՝ 04-094-0088-0008 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, հողամասի վրա կառուցված՝ 139.0 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տան նկուղը, 136.8 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տան 1-ին հարկը, 3.4 քառակուսի մետր արտաքին մակերեսով կաթսայատունը, 11.2 քառակուսի մետր մակերեսով պարիսպը՝ համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «Ջիվան Հարությունյան Արսենի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծի:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր բնակելի տան նկուղի, բնակելի տան 1-ին հարկի և կաթսայատան համար կազմում է 2316 Հայաստանի Հանրապետության դրամ, 1 քառակուսի մետր պարսպի համար կազմում է 1389,6 Հայաստանի Հանրապետության դրամ: Վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 662 190,72 (վեց հարյուր վաթսուներկու հազար մեկ հարյուր իննսուն Հայաստանի Հանրապետության դրամ յոթանասուներկու լումա) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի 900325191154 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝** **Լ. ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ**

2025 թ. մարտի 03
գ. Փարաքար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 մարտի 2025 թվականի N 185-Ա

## ՀԱԲԵԹ ՆՎԵՐԻ ԳԱԼՍՏՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի ա) ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով, «ՍԵՅՍՄՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2024 թվականի հոկտեմբերի 31-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի կողմից 2024 թվականի հոկտեմբերի 24-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2024U8LXVF), հողամասի սեփականատեր Հաբեթ Նվերի Գալստյանի 2024 թվականի նոյեմբերի 6-ի N 6388 դիմումը. ***որոշում եմ՝***

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Արևաշատ գյուղում գտնվող՝ Հաբեթ Նվերի Գալստյանին սեփականության իրավունքով պատկանող՝ 04-026-0003-0008 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, հողամասի վրա կառուցված՝ 38.3 քառակուսի մետր արտաքին մակերեսով կիսակառույց բնակելի տունը՝ համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «Ավագ Ավագյան Գագիկի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծի:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր կիսակառույց բնակելի տան համար կազմում է 1209 Հայաստանի Հանրապետության

դրամ: Վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 46 304,70 (քառասունվեց հազար երեք հարյուր չորս Հայաստանի Հանրապետության դրամ յոթանասուն լումա) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Հողատարածքին և շինությանը տրամադրել հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Արևաշատ, Մ. Մաշտոցի փողոց, թիվ 58 կիսակառույց (ծածկագիր 04042MGWVND3):

4. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի Արևաշատ գյուղի 900325156157 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

5. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Լ. ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ**

2025 թ. մարտի 03
գ. Փարաքար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 մարտի 2025 թվականի N 186-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ՝ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով. ***որոշում եմ***՝

1. 2025 թվականի մարտի 30-ին կայանալիք համամասնական ընտրակարգով անցկացվող ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու արտահերթ ընտրությունների վերաբերյալ քարոզչական պաստառները փակցնելու համար նախատեսել անվճար տեղերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման օրինակներն ուղարկել ՀՀ Արմավիրի մարզպետարան և ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ** **Լ. ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ**

2025 թ. մարտի 03
գ. Փարաքար

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Փարաքար համայնքի
ղեկավարի պաշտոնակատարի
2025 թվականի մարտի 3-ի թիվ 186-Ա որոշման

Ցուցակ

Փարաքար համայնքի տարածքում քարոզչական պաստառներ, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու համար անվճար տեղերի

| | Բնակավայրի անվանումը | Հատկացված տարածքի հասցեն | Մակերեսը /քառակուսի մետր/ |
|---|---|---|---|
| 1 | Այգեկ | Երևանյան խճուղի 26 (գրադարանի շենքի պատ) | մինչև 5 |
| 2 | Արևաշատ | Երևանյան խճուղի 61 (մանկապարտեզի ցանկապատ) | մինչև 5 |
| | | Երևանյան խճուղի 14 (հուշարձանի ցանկապատ) | մինչև 5 |
| 3 | Բաղրամյան | Կոմիտաս փողոց 26 (մանկապարտեզի ցանկապատ) | մինչև 5 |
| | | Շինարարների փողոց 47 (մշակույթի տան պատ) | մինչև 5 |
| 4 | Մուսալեռ | Երևան-Էջմիածին ավտոճանապարհի ձախակողմյան մասում գտնվող կանգառ | 1 |
| | | Երևան-Էջմիածին ավտոճանապարհի աջակողմյան մասում գտնվող կանգառ | մինչև 5 |
| | | Արցախ, Շառլ-Տիրան Թեքեյան փողոցների խաչմերուկում գտնվող կանգառ | 4 |
| | | Երևան-Էջմիածին ավտոճանապարհի ձախակողմյան մասում գտնվող կանգառ | 1 |
| 5 | Մերձավան | Երևանյան խճղ. N15 բազմաբնակարան շենքի պատ | 3-4 |

| | | | |
|---|---|---|---|
| | | Երևանյան խճղ. N63 բազմաբնակարան շենքի պատ | 3-4 |
| | | Երևանյան խճղ. N 65 բազմաբնակարան շենքի պատ | 3-4 |
| 6 | Նորակերտ | Նորակերտի մշակույթի տան պատ | մինչև 5 |
| | | Հայ Փոստի ցուցատախտակ | 2 |
| | | կանգառի տարածք | 2 |
| | | Նորակերտի մանկապարտեզի ճաղավանդակ | մինչև 5 |
| 7 | Պտղունք | Հ.Շիրազի փողոցի այգու ցանկապատ | մինչև 5 |
| | | Անդրանիկի փողոց՝ գովազդային վահանակ | 2 |
| 8 | Փարաքար | փոստային բաժանմունք՝ Նաիրի փողոց թիվ 15, շենքի կողային ճակատ | մինչև 5 |
| | | հատյարարությունների ցուցանակներ | 1 |
| | | Փարաքար գյուղի կենցաղի տուն՝ Նաիրի փողոց թիվ 34/1, կողային և ճակատային մասեր | մինչև 5 |
| | | Փարաքար գյուղի ստորգետնյա անցման մուտքի մոտ և անցումում | մինչև 5 |
| 9 | Թաիրով | Բազմաբնակարան շենքեր՝ Մամիկոնյան փողոց, ճակատային մասեր | մինչև 5 |
| | | Ստորգետնյա երեք անցումների մուտքերի մոտ | մինչև 5 |
| | | Կանգառասրահ՝ Մայրաքաղաքային փողոց 52 | մինչև 5 |
| | | Կանգառասրահ՝ Մայրաքաղաքային փողոց 100 | մինչև 5 |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 մարտի 2025 թվականի N 187-Ա

## ՀԱՄԼԵՏ ՄԻՔԱՅԵԼԻ ՉՈԲԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի ա) և բ) ենթակետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «ՍԵՅՍՄՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2024 թվականի օգոստոսի 27-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի կողմից 2024 թվականի օգոստոսի 30-ին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2024HERFRS), հողամասի սեփականատեր Համլետ Միքայելի Չոբանյանի՝ 2024 թվականի սեպտեմբերի 2 -ի N 5102 դիմումը. ***որոշում եմ՝***

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղում գտնվող՝ Համլետ Միքայելի Չոբանյանին սեփականության իրավունքով պատկանող՝ 04-094-0115-0002 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, հողամասի վրա կառուցված՝ 119,2 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը, 7,9 քառակուսի մետր արտաքին մակերեսով ծածկը, 2,7 քառակուսի մետր արտաքին մակերեսով զուգարանը՝ համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «Ջիվան Հարությունյան Արսենի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերի:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր բնակելի տան համար կազմում է 2316 Հայաստանի Հանրապետության դրամ, 1 քառակուսի մետր ծածկի և պարսպի համար կազմում է 1389,6 Հայաստանի Հանրապետության դրամ: Վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 290 796,96 (երկու հարյուր իննսունհազար յոթ հարյուր իննսունվեց Հայաստանի Հանրապետության դրամ իննսունվեց լումա) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Հողատարածքին և շինությանը տրամադրել հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Փարաքար, Ա. Բաբաջանյան փողոց, թիվ 13 բնակելի տուն (ծածկագիր 04012UNMUWUP):

4. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ գործառական վարչության Փարաքար համայնքի ֆոնդային եկամուտների 900325191154 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

5. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝** **Լ. ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ**

2025 թ. մարտի 03
գ. Փարաքար